Հովհաննես Շիրազ

Երգ Հայաստանի

1

Թիկունքս արած Արագածին՝ կանգնած եմ ես Մասսի դեմ.
Ի՞նչ է խորհում ծերուկ հսկան, ի՞նչ է տենչում՝ չգիտեմ:

Միայն նրան եմ հասկանում՝ հողիս ձայնին ունկնդիր
Եվ քեզ, չքնաղ իմ Վանա ծով, դու շղթայված իմ երկիր:

Դու ծնվեցիր, իմ ժողովուրդ, Արարատ սար ու ձորից,
Ինչպես Վանա ծովից՝ Սևանն, ինչպես մանուկն՝ իր մորից:

Դու ժպտացիր ինչպես մանկիկ՝ ծնված գրկում իր հույսի, Հողագնդի ստինքների՝
Արագածի, Մասիսի…

Վանա ծովը կաթն էր անուշ՝ քո շուրթերին մանկական,
Քեզ չի սնել ուրիշ մի ծով, չունես ուրիշ բնօրրան:

Դեռ էն գլխից անգլուխներ քեզ գլխատ ել տենչացին,
Ա՛խ, մերթ արյուն, մերթ արցունք են խառնել քո կյանք ու
հացին:

…Աժդահակի խոլ նախահայր Բելն Էլ ընկավ, բայց անվերջ
Դու սարի պես միշտ կանգնեցիր քո սարերի գրկի մեջ:

…Դարեր անցան, եկան դարեր, ծնվեց Արան Գեղեցիկ,
Սև աչքերը սիրո գիշեր՝ հարբեցումի գինով լիք:

Եվ Շամիրամ՝ մի առնաբաղձ, տեսավ նրան ու գերվեց,
Դեպի Մասիս ու Արայի գեղեցկությունն արշավեց…

Ու բախվեցին խաբված ազգերն, արյունն այնպես ծովացավ,
Որ մեջն ազգերն այրվեցին, շամիրամներն՝ հովացան…

Ընկավ Արան իմ Գեղեցիկ, բայց գեղեցիկ միշտ մնաց,
Ընկավ Արան, որ Արարատ մնան լեռներն հայրենյաց:

Եվ ժողովուրդն ընդոստ ոստնեց՝ ձեռքին և՛ սուր, և՛ գութան,
Ելավ ծուխը մեր ծիրանի՝ սիրած դրոշն հայության:

Խոլ արշավներ նա խորտակեց, պահեց երկիրն ինչպես լեռ,
Բայց իր հացը արնոտեցին նոր դժոխքներն արնաձեռ:

Դարերն Էլի մրրկաբաշ առյուծների պես անցան,
Արագածից մինչև Մասիս կես դար կանգնեց ծիածան:

Կանգնեց թրով Տիգրան Մեծի, երբ թագն առավ իր գլխին,
Երբ վահանվեց հայոց զորքը իր հայրենի մայր հողին:

Արշավեցին երկրի վրա նորից նորոգ հորդաներ,
Բայց հայ ոգին Էլի ելավ, պահեց երկիրն, ինչպես լեռ…

Ժամանակը ջաղացի պես աղաց դարեր նորանոր,
Բայց հայն Էլի արյունոտվեց, ցավեր եկան դառն ու խոր:

Դարեր գալիս, չարեր գալիս՝ տենչում էին ալեկոծ
Հայոց Վանա ծովն էլ խմել, որպես արյունն իմ հայոց:

Բայց նրանց դեմ նորից ելան վահագնների պես հուրհեր Հայրենատեգ զորքերը մեր, ինչպես այրվող անտառներ:

Ծագեց Մաշտոցն ինչպես մի նոր, անմահ բանակ հայրենի,
Ու ձև առավ խոսնակ ծարավ մեր հին լեզուն մայրենի:

Եվ բարբառեց հույսերն հայոց, երկրե-երկիր կարկաչեց,
Խավարի մեջ դեպի գալիք առավոտի դուռ բացեց…

Սակայն խուժեց հրառրմիզդ տիրան առյուծն Իրանի՝
Ընդդեմ տեգի վարդանաշունչ՝ հագավ այրյան ծիրանի:

Բայց Վարդանը վահանի տակ ծիրանավառ Վահագնի,
Իր Ավարայր դաշտով քամեց արյան գետերն Իրանի:

Դարերն անցան՝ մանկանց նման հրհրելով մեկ-մեկու,
Անցան, կորան հավերժության անտառներում ահարկու:

Մեր դաշտերին արաբաձայն խորշակ փչեց խելահեղ,
Ավարելով հաց ու ոսկի և աղջիկներ մարմնագեղ:

Ինչպես Դարեհն դարանադավ, հորդեց նրանց զորքը մառ,
Տնքաց երկիրն իմ Նահիրյան, ինչպես այրվող մի անտառ:

Բայց մայր հողը ե՞րբ Է լռում. ելան նորից նրանց դեմ Բագրատունիք հայր ու որդի ու թոռնուծոռ, ինչպես վեմ:

Շառաչեցին վահան ու տեգ, և փախս առան գլխիկոր
Հորդաները մեր աշխարհից… և կյանք առան դաշտ ու ձոր:

Որդիներդ կայսրվեցին բյոլզանդիո վեհ գահն ի վեր,
Քեզ պատեցին, սակայն, դժնի օտարամոլ կույր ցավեր:

Հույնը կուզեր ոսկու նման հալել-ձուլել քո լեզուն,
Սակայն հաղթեց Մաշտոցն Էլի աստվածային դյուցազուն:

Դարեր անցան, անցան դարեր, ո՞ր մեկն առնեմ իմ երգին,
Մի օվկիան Է անցյալն հայոց, ես՝ մի գավաթ եզերքին:
Դարերն անցան, օր լուսացավ բնօրրանում հայության, Սարդարապատն ավարայրվեց, որ չմտնես Էլ պատյան:

Վանա ծովդ մնաց գերի, վիշապաքաղ իմ երկեր,
Վանում Է դեռ քո պատմության լացն ու խավարն ակնակրը:

Անին մնաց քո անցյալի դեռ բաց վերքը հեռավոր,
Տուն կբերե Վանն ու Անին Երևանդ կյանքով նոր:

Չես մոռանա Մասիսներդ, տուն կբերես, իմ սուրբ մայր,
Թեկուզ աճյունն արեգակի դեպի գիրկդ ընկնի վար…

Ու թող երգս հոգիդ դառած, դառած նոյան աղավնի՝
Թռնի երթա՝ քո ծաղկումը աշխարհներին լուր տանի:

Ով որ խնդա՝ եղբայրն Է քո, բարեկամը քո արդար,
Ով մռայլվի՝ քարը գլխին,- ծաղկի՛ր, ցնծա՛ դարեդար:

Հնչի՛ր լեզուն քո մայր Արաքս, կանգնի՛ր ինչպես Մասիս լեռ՝
Դու դեռ օրոցք՝ լույս ձեռի տակ իմ հույսերի այս անմեռ:

Զմրուխտ օրոցք իմ Հայաստան՝ լիքը մանուկ նոր կյանքով,
Որ ծաղկում Է, հսկայանում մանուկ Դավթի խոյանքով:
Ժայռի մեջ է Միերը դեռ, բայց դուրս կգա երբևէ,
Նավդ Վանա ծով կձգես, չարը մեղքը կքավե:

Ո՞նց կարող է գերի մնալ Արարատդ վիթխարի,
Վաղն օրոցքից դուրս կոստնես ժայռից ելքով Միերի:

2

Դարերն ինչքան քեզ թաղեցին՝ դու ծլեցիր, ինչուզես ցորեն-
Դու իմ զողտրիկ հայ ժողովուրդ, պիտի ծաղկես հավերժորեն, Պիտի ծաղկես,
պիտի պտղես, քանզի դու տունկն ես
աստրծու,
Հավատում եմ քո գալիքին՝ միշտ չես մնա մի բուռ ածու,
Շատ չես մնա միաչքանի՝ այս ծովակով քո Սևանա,
Ա՛խ, ե՞րբ պիտի մյուս աչքդ բանաս՝ ծովով քո աչք Վանա,
Փոքր Միերդ ելավ բանտից, Մեծ Միերդ բանտում Է դեռ,
Մեծ Միերդ՝ ծովը Վանա, Աասունն անմահ, Մասիսն
անմեռ…
Մի՞թե պիտի զույգ աչքերդ բաց աչքերով չհամբուրեմ,
Մի՞թե պիտի քո Մասիսը հայոց լեզվով ետ չբերեմ…
Հաստատ գիտեմ, որ կազատվի՝ թեկուզ դարեր անցնեն
գլխով,
Բայց կուզեի ե՛ս ազատեմ, որ ծածկվեի նրա հողով: